

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից պ. Բաֆֆի իր ճանապարհորդութեան ժամանակ գտել է մի գրչագիր աւետարանի մէջ հայոց հին բնեռագրերի մի քանի օրինակներ, որոնց ընթերցանութեան եղանակը հայոց մեսրոպեան տառերով գրված է նոյն իսկ բնեռագիր տողերի տակ: Պարոնը ուղարկել է մեզ իր գիւտը Թիֆլիսի հնագիտական ժողովին ներկայացնելու համար, բայց զգբաղդաբար ժողովը արդէն վերջացած էր և հնագէտները զբաղացած էին, երբ մեր աշխատակցի նամակը ստացանք:

Երկու օր առաջ հրատարակեցաւ Թիֆլիսում
առաջ «Вѣстникъ Кавказа» ցաղերի մի հա-
մար, հրատարակութեան իրաւունքը չը կորցնե-
լու համար:

ԽԱՐԿՈՎԻՑ պ. բժշկապետ և պրոֆէսոր ՇԸԼԷ
Թեանց ուղարկում է մեզ հետեւեալ մի քանի
տողերը, որ խնդրում է մեզ տպագրել մեր լրա-
գրի մէջ. «Բանիցս պատահեցաւ որ Խարկով ե-
կող հայերը, չը գիտենալով իմ հասցէս, հարկա-
դրովմ եղան դիմել ուրիշ բժշկներին: Այս պատ-
ճառով պատիւ ունեմ խնդրել ձեզ տպել ձեր
պատուի լրագրի մէջ իմ հասցէս, որ հետեւեալն
է. Харьковъ, Театральная площадь, домъ Ян-
ковича.»

Ստացանք ՇԱՍՄԱՌՈՒՑ Կ. Սարգիս Համբար-
ձումեանցից 15 թուր, բաժանորդագրին «Ժուր-
նալ դ'Օրիան» լրագրի համար, Շամախու մի քա-
նի հայ-աւետարանականներէց:

Ստացանք ԱՄՆԲԱԽԱՆԻՑ 8 թուրը բաժանորդագրին «Վարչակազմի» կողմից հետևելով անձինքներին։ ՅՈՒՆ. Սթեփանյան, Ստեփանյան, Կարգեր, Գրիգոր, Ավուխանյան, Գեորգ Սթեփանյան, Թ. Հովհաննիսյան, Սթեփանյան, Խաչատուր Միրումանյան, Գրիգոր Միրումանյան և Խաչատուր Ֆարքլանյան, Առավելագույն թվով ընտրված են։

Հոգևորականների 983 թուրը 13 կողմ։

ՂԶԼԱՐԻՅ Յետեալ բաժանորդներ ևն զրկե
«Ժողնայ դ'Օրիան» լրագրին, ուղարկելով մե
17 բուրյ, Թ. Կաճկաճեանց, Ա. Կաճկաճեանց, Ն.
Անանեանց, Մ. Անանեանց, Թ. Միշկելեանց, Ա.
դամ վարդապետ, Է. Թաւարբէգեանց, Յ. Աստուա
ժատուրեանց, Խ. Ղորղանեանց, Ա. Թանդոյեանց
Դ. Աւաքելեանց, Մ. Թումանեանց, Աւաջվա
փողերի Յետ կանխ 1000 ր. 13 կօպ.:

Մինչև այժմ պ. Քիւրքեճեանի ֆոտոգրաֆի-
կան ժողովածուն գրկեցին «Ընչակի» իմբպրու-
թեան մէջ երեք անձինք. Խտամանեանց և եր-
կու. եղբայրներ Արծրունի:

Երեքշաբթի օր, 20-ին հոկտեմբերի, Թիֆլիսի ժողովարանում լինելու է կոնցերտ յոգուտ չբառացի մագիստների, կոնցերտին կը մասնակցեն պ. պ. Ալիխանով, Կորգանով, Օպոչինին, Աղաթան, և տիկիններ Իվանովսկի, Շեղովսկի օր. Գարգաչևան:

Գիրակի, հոկտեմբերի 11-ին առաւօտեան ժամի. 11-ին պատարագից յետոյ Հաւաքարի Մարիամեան օրիորդական դպրոցը կատարեց լսողութեան տանն և միամնայ տարեգարծի հանդէսը՝ Ներկայ էին այդ հանդիսին ի միջի այլ թաղաքագլուխ պ. Մատինով, պ. Թշկապետ Միքայէլ Շահ-Պարոնեանց, պ. Իւզըպեանց մեծ բազմութիւն, մանաւանդ կանանց սեռը։ Պ. Կ. Թէմուրազեանց, որպէս ներկայացուցչ. դպրոցի կարգաց դպրոցի ուսումնական հաշիւ անցեալ ուսումնական տարվայ և մի դադարեալ առեց դպրոցի ներկայ դուրսեան մասին, որ երեեցաւ, որ դպրոցը ներկայումս արդէն երկու դասատուն ունի 73 աշակերտուհիներով և եւս գործող անձինքներով։ Պարոնը վերջացրեց ճառը ուրախութիւն յայտնելով որ ինքն, ընդ հաւաքարցի լինելով և զլիաւորապէս Հաւաքարում գործելով, վերջին երկու, երեք տարեներում նկատում է թիֆլիսի այդ քաղաքումս մէջ մի նշանաւոր բարոյական և մտաւոր շահ ժուռ, նկատում է ինքնասնազոյթեան և ինքնադիմազոյթեան հաստատա նշոյլներ։ Սրբ. տ. Գրիգորեան Մարտիրոսեան, որպէս դանձապահ, ներկայացրեց անցեալ տարվայ երկու

մտից հաշիւը, որից երեքացաւ որ դպրոցի գանձարանը, մի անշնչան տարբերութիւն է ունեցել ծախսի և մուտքի մէջ, այն է 6 րուբլ և մի ֆանի կօպէկ: Կպրօցի վարչութեան կողմից իր հիմնադիր Խորէն վարդապետ Ստեփանէին ուղարկված հեռագրին, այդ վերջինը պատասխանել էր հետեւեալ հեռագրով: «Հնորհաւորում եմ և ցնծում եմ. թող երկիայլին Ուսուցիչը օրհնէ բոլոր աշակերտահիներին և դպրոցի բոլոր բարեկամներին յաջողութեամբ շարունակուալ այդ ամենապսեմ գործը: Աստուած կը յիշէ այն ազնիւ մշակներին, որոնք հոգում են իրանցից փոքրերի վրա: Ազօթում եմ Աստուծուն, որ ձեր ձեռքով դաստիարակված հայ օրիորդները ապրեն ընտանիքում ամչպէս, ինչպէս սիրտը կըրմբում: Յիշեցէ՛ք որ ամենաբարձր արժանաւորութիւնը բաղդաւոր քրոջ համար պէտք է լինի ջրմուռնայ իր աղքատ և հիւանդ քրոջը»: Հանգէսը վերջացաւ աշակերտահիներին ձեռագործների վիճակախաղով, որից գոյացաւ մօտ 163 րուբլ գումար:

Գլխավորից մեզ գրում են: «Մեզանում այգե-
բաղը վերջացաւ բաւական լաւ: Բայց ոչովհետեւ
մեր նաճապետական ձևով առուտուր անող
վաճառականները իրանց յիմարութիւնից այս
տարի Նիժնի-Նովգորոդի տոնավաճառում իրանց
սպասած օգուտը չեն ստացել, ուստի ուզումն
են իրանց վարձատրել, որ խեղդում են
խեղճ այգետէրերին և զինու գինը այնքան ցած
է, որ հազիւ թէ խեղճ այգետէրերը կը հանեն
իրանց ծախսած փողը:»

ԱՆԱԼԻՔԱԼԻՔԻ մեր թղթակիցը գրում է մեզ
«վերջին օրերս մանկանյ տարափոխիկ հիւան-
դութիւնը, որի մասին գրած եմ ձեզ արդէն
կարծես աւելի էլ սաստկանում է. Առատօտից
մինչև երեկոյ եկեղեցու զանգակը իր տխուր ձայ-
նը հնչեցնում է և վհատեցնում է կենդանի մը
նացած մարդկանց, Հետեւալ թէրը ցոյց կը
տան իմ ասածիս ճշմարտութիւնը, Օգոստոս ամ-
սին մնած են 12 մանուկներ, սեպտեմբեր ամ-
սին քսան հոգի, իսկ հոկտեմբերի 1-ից մինչև
այսօր, այսինքն տաս օրվայ ընթացքում մեռե-
ն են 17 մանուկներ, Այս համամատօթեամբ, ու-
րեմն, այս ամիսը կարող են 51 մանուկնե-
վախճանվել: Գրեթէ մի տուն չը կայ, որի մէ-
զոնէ մի հիւանդ մանուկ չը լինի: Այդ տեսն-
վում է և տեղիս ազգային ուսումնարաններում
վերառենք արական դպրոցը. ստորին պատ-
րաստական ուսումնարանի 53 աշակերտներին
12 հոգի հիւանդ են, միջին պատրաստական
55 աշակերտից 4 հիւանդ են, միայն առաջին
նում հիւանդ չը կայ:»

Պ. Սարգսիանը, Վոսկիպայի, խնդրում է մե
տպել հետևեալ նամակը՝ «ԹՅՂ տուեք, պ
խմբագիր, ձեր պատեական լրագրի միջոցով հը
րատարակել, որ 100 օրինակ պ. Շահապղեհան
չարագրութիան «Հրապարակախօս ձայն» ես ի
կողմից ձրիաբար քննչայում եմ հայոց դպրոցնե
րին և մատենադարաններին, Զանկադոնները կա
րող են ստանալ երկու և աւելի օրինակ մե
կօտորայից, Վոսկիպայում, հետևեալ հասցե
«Въ Бакинскій торговый домъ Тагіева и б
Саркисовыхъ, Москва, на Мясницкой.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ፆፐፐሮቶሁ

«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրու-
են հետևեալը: Ռուսաց Ֆինանսների մ-
նիստրութեան բարձր պաշտօնեաներից մէ-
կը, երեւի, կը շտապացնի Ֆինանսախ-
բանակցութիւններւ ընթացքը Բ. Դու-
հետ: Ռուսաց դեսպան Կ. Նովիկով, խիս-
թաւելելով պահանջեց անյապաղ պատասխ-
ան տալ իր գրութեանը, և Բ. Դուռը չը գ-
տէ թէ ինչպէս դուրս գայ այդ դժու-
արութիւնից, որը ինքն ստեղծեց հոկտե-
մբերի 3-ի իր գրութեամբ: Հաշուով պ-
գրութեան մէջ այն եկամուտները, որ Ն-
կարող է տալ իր պարտատէրերին, և յայ-
նելով որ Ռուսաստանին զինւորական կօն-
րիբուցիայի վճարելը կը մօնի այդ հաշ-

մէջ, Բ.Գուռը չէ կարող մերժել պ. Նովիկովի պահանջները, որ վերոյիշեալ եկամուտներէն յի մի քանիսը որոշվեն մասնաւորապէս կոնտրիբուցիան վճարելու համար: Անուղղակի հարկերը և Արեւելեան Բուժկիւիայից ստացած եկամուտի աւելորդը առաջարկված են թիւքաց օբլիգացիաների տէրերին բաւականացնելու համար: Այսպիսով կղզուց ստացած եկամուտի աւելորդը անգլիական կառավարութիւնն է վերցրել, նշանակում է Ռուսաստանին բաւականացնելու համար բոլգարական հարկն է մնում: Ռուսաց կառավարութիւնը հաստատում է, որ եկամուտի այդ աղբիւրը, որը մինչև պատերազմը գոյութիւն չունէր, չէ կարելի թիւքաց պարտատէրերին բաւականացնելու համար գործադրել: Ռուսաստանը, երեւի կը համաձայնվէր ընդունել բոլգարական հարկը դռնէ կոնտրիբուցիայի մէկ մասը ստանալու համար, բայց բանը նրանումն է, որ հէնց այդ հարկը թիւքահան չէր կամենայ ուսներին յանձնել: Զմարիտ է, նա կարող էր կոնտրիբուցիան վճարելու համար իր ուրիշ եկամուտներից մէկը տալ, բայց դա հոկտեմբերի դրութեանը հակառակ կը լինէր, իսկ սուլթանը վախճում է յետ կանգնել իր այդ գրութիւնից իր ուրիշ պարտատէրերին չը քաջալերելու համար նոյն պահանջներ անելու: ԳԺուար է նախագուշակել, թէ ինչպէս Բ. Գուռը կը դուրս գայ այդ դժուարութիւններից: Ռուսաց գրութեան առաջին մասում բոլգարական հարկի վրա ցոյց է տուած, որպէս եկամուտի այնպիսի աղբիւրի վրա, որը Բ. Գուռը իրաւունք չունի գրաւ դնել իր պարտատէրերի մօտ:

ՖԻԱՆՍԻԱ

Գրեզի, որ հրաւիրել էր իր մօտ Գամբետտային, վերջինի այցելութեան ժամանակսոսեց նրա հետ ընդհանրապէս քաղաքական գործերի դրութեան մասին։ Այդ խօսակցութեան ժամանակ Գամբետտա կարծիք յայտնեց, որ աւելորդ է այժմ զբաղվել նոր մինիստրութեան կազմելով, քանի որ այժմեան մինիստրութիւնը հրաժարական է առել և ազգային ժողովներն էլ չեն գումարվել։ Հարկաւոր է սպասել, որ պատգամաւորները ժողովը քննէ այժմեան մինիստրութեան գործունէութիւնը, յայտնէ նրան իր հաւանութիւնը կամ դժգոհութիւնը և այնուհետեւ կազմել նոր մինիստրութիւն։ Գրեզի, Գամբետտայի կարծիքը մանաւորց յետոյ, չը յանձնեց նրան նոր մինիստրութեան կազմելը, այլ պայմանաւորվեց նոր տեսութեան մասին պատգամաւորների ժողովի գումարվելուց յետոյ։

Գրկվիի «La Paix» լրագիրը առաջա-
կում է Գամբետտային լամբոյջ կեանքի հ-
մար սենատոր նշանակել և յանձնել նրա
մինիստր-նախագահի պաշտօնը, իթէ պա-
գամաւորների ժողովը չը վաւերացնէ նր-
նորութիւնը: Հաւատացնում են, որ Գր-
կի առաջ էլ հակված է եղել յանձն-
Գամբետտային ներքին գործերի մինիստր-
ութիւնը, միայն թէ որքան կարելի է ն-
հետեւ ֆինար արտաքին գործերին միջ-
մտնուց: Այդպիսի առաջարկութիւն մին-
անգամ չէ արված Գամբետտային, որովհ-
տեղ հակառակ է նրա օրինաւոր ինքնու-
սիրութեանը:

Հոկտեմբերի 11-ին կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհուրդը, որի ժամանակ գնհնարալ Ֆարր կարդաց իր գեկուցումը հիւսիսային Աֆրիկայի զործների դրուժնմանն: Այդ գեկուցումից երևում է,

արշաւանքը կերուանի վրա յետաձգված է։
Բարտեղեմի Սենտ-Լիբր հաղորդեց, որ մի
քանի ֆրանսիական և անգլիական զրահա-
կիր նաւեր ուղարկված են Նգիպտոս և
դրա պատճառն այն է, որ Բ. Կոռնը ու-
ղարկել է Նգիպտոս իր հաւատարմատարին։
Եթէ վերջիններք յիս կը կանչվեն, այդ
նաւերը չեն երեւայ Ալէքսանդրիայի առաջ։
Առւերական մինիստրի զեիուցման համե-
մատ բանակցութիւնները Անգլիայի հե-
տաւերական նոր դաշնագրի մասին կարող
են զանկայի նպատակին հասնել։

ԳԱՄԲԵՏՏԱ ԵՒ ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ

Փարիզում նորերումս լուր տարածվեցաւ որ Վամբետտա գաղանի ուղեւորիկ է Վերմանիա իշխան Բիւմարկի հետ տեսնելու համար։ Այդ առիթով «Times» լրագրի Փարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալը։ «1878 թւականի յուլիսին ես մերկար խօսակցութիւն ունէի իշխան Բիւմարկի հետ, որ այդ օրը շատ լաւ էր տրամադրված և երկար խօսում էր։ Մե խօսակցութիւնը կատարվում էր գերմանական դեսպան իշխան Զօհենլօէի և բարոն Զօլշտէյնի ներկայութեամբ, որ վայելում էր Բիւմարկի կատարեալ հաւատարմութիւն և, իբրև Փարիզի գերմանական դեսպանատան քարտուղար, շատ լաւ ծանօթ էր Ֆրանսիական քաղաքական գործերի դրութեան հետ։ Իշխան Բիւմարկ խօսում էր զանազան առարկաների մասին. կոնգրեսի պատերազմի, Ֆրանսիական քաղաքական գործիչների մասին և այլն։ Այդ ժամանակէլը Վամբետտայի անունը յիշեց։ «Կամբետտա, բացականչեց իշխանը, ահա մարդ, որին ես կուզենայի տեսնել իմ մահ հուանից առաջ։ Ինչ ուզում են տեսնել բայց նա երեւելի մարդ է։ Նա իր բոլոր հայրենակիցներից բարձր է։ Ասում են, նա շատ զրաւիչ մարդ է, մի և նոյն ժամանակ նաև ամենքը համոզված են, որ զրաւիչ մարդիկ չեն կարող պետական երեւելի գործիչներ լինել։» — Թիւրք ինձ ասաց մի ժամանակ, ընդմիջեցի ես, որ դուք չափազանց զրաւիչ մարդ էք, բայց այնու ամենայն դուք յայտնի էք իբրև երեւելի քաղաքական գործիչ։ — Հազիր թէ ինձ զրաւիչ համարեն Վերմանիայի մէջ, պատասխանեց Բիւմարկը և աւելացրեց, այո, ես չեմ կամենայ մեռնել Վամբետտային տեսնելուց առաջ։ Այդ խօսակցութիւնից յետոյ, երբ ես քնացի իշխան Զօհենլօէի և բարոն Զօլշտէյնի հետ, ես մտածեցի, որ իշխանի և սաճնեց Վամբետտայի մասին պատահմունք չէին։ Ես նրանց յայտնեցի իմ միտքը։ «Կարծեմ, նկատեցի ես, որ իշխանի երկրանգամ կրկնած ցանկութիւնը Վամբետտային տեսնելու մասին հասարակ պատասխաններ չէր։ Իշխանը գիտէ, որ ես ծանօթ եմ Վամբետտայի հետ և որ Փարիզ վերադառնալուց յետոյ ես նրա հետ կը տեսնվեմ։ Նա չը խնդրեց չը պատմել Վամբետտային իր ասածները նրա մասին և կարծես նա ցանկանում է, որ ես բոլորը հաղորդեմ Վամբետտային։ Դուք ինձանից լսեք ճանաչում կանցկերին, ի՞նչ էք կարծուարդեօք հարկաւոր չէ նրա և Վամբետտայի մէջ մի տեսակցութիւն կայացնել։ Ես նախապաշարաստեմ տեսութիւնը, իսկ դու բանակցութիւնները կատարեցեք։» Իշխան Զօհենլօէ և բարոն Զօլշտէյն համաձայնեցին ինձ հետ և մենք պատրաստվում էինք գործողութեան նախագիծը կազմել։ Մի օրը ես այցելեցի բարոն Զօլշտէյնին, համատեղեցի ինքեւրով, որ նա արդէն տեսնու